

Ախալքալაქიում նորարարական ավտოտեխასպասարկման կենտրონի բացում:

Ավտոտեխասպասարկման սեփականատար՝ Մասունիկ Ասլանյանը Ախալքալաքիում Եվրամիության կողմից հայտարարած դրամաշնորհային մրցույթի մասին համացանցի միջոցով իմացավ: Չնայած նրան, որ սպասարկումը իրականացնում էին արհեստին արտասահմանում տիրապետած մարդիկ, այս բիզնեսի զարգացման համար դա բավական չէր՝ հին սարքավորումներով անհնարին էր արդյունավետ սպասարկել ժամանակակից ավտոմեքենաների սեփականատերերին:



Նախագծի արդյունքում զբաղվեց՝ 2 տեղացի
Նախագծի ընդհանուր բյուջեն՝ 38,605.83 լարի
Եվրամիության ֆինանսավորումը՝ 27,783.00 լարի
Համաֆինանսավորումը՝ 5,573.00 լարի



Դեռ 1992 թվականից Եվրամիությունը օդի որակի բարելավման նպատակով, ավտոմեքենաների հետ կապված նոր կանոնակարգեր մտցրեց, ինչը նշանակում էր նոր չափանիշի հաստատում ավտոմեքենայի արտանետման համար: Արտանետման համար Եվրո չափանիշների հաստատման նպատակը օդում հետեյալ փաստկար նյութերի արտանետումների նվազեցումն էր՝ ազոտի օքսիդ (NOx), ածխածնի մոնօքսիդ (CO), հիդրոկարբոններ (HC) եւ փոշու մասնիկներ (PM):

Վրաստանի դիզելի որակը Եվրո-4-ի չափանիշին 2019 թվականի հունվարի 1-ից հավասարվեց եւ կամաց-կամաց պլանավորվում է անցնել Եվրո-5-ի եւ Եվրո-6-ի: Ավտոտեխասպասարկման սեփականատերերին անհրաժեշտ է ձեռք բերել նոր կահավորանք, ինչը հավելյալ ծախսերի հետ է կապված: Մասունիկ Ասլանյանը դրամաշնորհային առաջարկը LAG-ի օգնությամբ պատրաստեց եւ ENPPARD-ի նախագծի շրջանակներում ստացավ ֆինանսական աջակցություն:





Այսօրվա դրությամբ ավտოსպասարկման ծառայությանը այն վարորդներն էլ են դիմում, ովքեր պետք է անցնեն պետական տեխնիკում: Ինչպես պարոն Սասունիկն է ասում, նրանց կողմից ստուգված ավտոմեքենաները արգելքի չեն հանդիպում եւ առաջին իսկ անգամին հաջողությամբ ստանում են դրական գնահատական:

Նախագծի շրջանակներում ձեռք բերված կահավորանքով, այսօր ավտոտեխսպասարկման համար իրենից խնդիր չի ներկայացնում սահմանել CO, HC եւ PM մակարդակը:

«Հայտնում ենք, որ շրջանի զբոսաշրջային պոտենցիալը աճում է եւ նմանատիպ ավտոտեխսպասարկման առակայությունը շատ կարելի է, քանի որ այցելուները հաճախ Եվրո 5 եւ Եվրո 6 չափանիշի շարժիչով մեքենաներով են այցելում եւ հաճախակի են դիմում մեզ սպասարկման համար: Ըստ մեր տեղեկության, Վրաստանի մասշտաբով միակ ավտոտեխսպասարկումն ունենք մենք, որը հաճախորդին այսպիսի բազմակողմանի կոմպլեքսային ծառայություն է առաջարկում», - ասում է Սասունիկ

Քիմմաքրում, ավտովազման կետ, ավտոթյունինգ, յուղ փոխել եւ սա ծառայությունների լրիվ ցանկը չէ, որը ավտոտեխսպասարկումը առաջարկում է հաճախորդին: Ախալքալաքիի մունիցիպալիտետի 7 (2 նախագծի շրջանակներում) բնակիչ արդեն զբաղված է ավտոտեխսպասարկման ծառայությունում: Նրանց հիմնական մասը աշխատում էր արտասահմանում: Իսկ այսօր նրանց հնարավորություն տրվեց, վերադառնալ ընտանիքներին եւ հայրենի Ախալքալաքիում գտնել ապրուստի միջոց:

Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեանական նախագծի՝ (ENPARD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:



Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.